



ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ – 110

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎ
Նվիրված՝ ակադեմիկոս
Արամ Ղանալանյանի
ծննդյան 110-ամյակին
և ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին

ԾՐԱԳԻՐ

և

ՉԵԿՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՏԵՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ – 110

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Նվիրված՝ ակադեմիկոս
Արամ Տիգրանի Ղանալանյանի
ծննդյան 110-ամյակին
և

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
հիմնադրման 60-ամյակին

ԾՐԱԳԻՐ

և

ՁԵԿՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Խմբագիրներ՝
Պ. Ս. Ավետիսյան, Տ. Ս. Դալայան

ԾՐԱԳԻՐ

Հունիսի 21, ուրբաթ, 2019 թ.

9:00 Մեկնում Երևանից

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ.

ՅՈՒՇԵՐ Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ծաղկաձոր, Գրողների միության հանգստյան տուն

10:00 – 11:00

- **Պավել Ավերիսյան** (ՀԱԻ տնօրեն, ԳԱԱ թղթ. անդամ)
Բացման խոսք
- **Յուրի Մուխարյան** (ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար)
Ողջույնի խոսք
- **Հենրիկ Հովհաննիսյան** (ԱԻ, ԳԱԱ թղթ. անդամ)
«Արամ Ղանալանյանի մասին»
- **Անդրեաս Դոյուխանյան** (ՀՊՄՀ, ԳԱԱ թղթ. անդամ)
«Մեծ բանագետի անանց հմայքը»
- **Պեպրոս Բեդիրյան** (ՀՊՄՀ, ք.գ.դ., պրոֆ.)
«Խոսք Արամ Ղանալանյանի հիշատակին»
- **Էմմա Պեպրոսյան** (ՀԱԻ, ք.գ.դ.)
«Հուշեր Արամ Ղանալանյանից»
- **Արուսյակ Սահակյան** (ՀԱԻ / ԵԿՊԿ, ք.գ.թ.)
«Մեծեր (հուշեր). Արամ Ղանալանյան»
- **Հայկ Ղանալանյան**
«Հուշեր Արամ Ղանալանյանի մասին»

Լիագումար սիստի գեկուցման տևողությունը՝ 5-10 րոպե:

11:00 – 11:10 Սրճադադար

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ.

ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԸ ԵՒ ՅԱՅ ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Նիստավարներ՝ *Պավել Ավետրիայան, Տորք Դալայյան*

11:10 - 13:20

- *Արմեն Պետրոսյան* (ՀԱԻ / ՄՄ, ք.գ.դ.)
«Ժայռից ծավող հերոսի առասպելը համեմատական համատեքստում»
- *Թամար Հայրապետյան* (ՀԱԻ / ԵՊՀ, ք.գ.դ.)
«Արամ Ղանալանյանը՝ Ղազարոս Աղայանի «Անահիտը» հեքիաթի մշակման մասին»
- *Արուսյակ Սահակյան* (ՀԱԻ / ԵԿՊԿ, ք.գ.թ.)
«Արամ Ղանալանյան. վիպահավաք և վիպագետ»
- *Սերգեյ Վարդանյան* (ՀԱԻ)
«Որոշ դիտարկումներ Ա. Ղանալանյանի կազմած «Նմուշներ հայկական հակակրոնական ֆոլկլորից» ժողովածուի մասին»
- *Հայկանուշ Մետրոսյան* (ԼԻ, ք.գ.դ.)
«Բուսանունները Ա. Ղանալանյանի «Առածանի»-ում»
- *Լիլիթ Միմոնյան* (ՀԱԻ, պ.գ.թ.)
«Հայկական ժողովրդական չափածո առասպելներ և ավանդազրույցներ. շարունակելով Ա. Ղանալանյանի գործը»

13:20 – 14:20 ՃԱՇԻ ԸՆԴԻՄԻՋՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ.

ԼԵՉՈՒ ԵՒ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նիստավարներ՝ *Հայկանուշ Մետրոսյան, Նվարդ Վարդանյան*

14:20 – 16:25

- *Վազգեն Համբարձումյան* (ԼԻ / ԵՊՄՀ, ք.գ.դ., պրոֆ.)
«Հնդեվրոպական բանաստեղծական խոսքի կառուցման երկատումային բաշխվածությունը ցեղակից լեզուների առնչությունների համատեքստում»
- *Տորք Դալայյան* (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Հավլունի թրի մասին դիցաբանական պատկերացումները և երկաթի առաջացումը»

- **Գոհար Սյունիական** (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Տոնական» առաձանի. հայ ավանդական տոները առաձային լեզվում»
- **Լուսինե Անեքիսեան** (ԳԻ, ք.գ.թ.)
«Հացի պաշտամունք և ինքնություն. լեզուի մաստասիրություն»
- **Անժեյա Ամիրխանյան** (ՀԱԻ)
«Գայլ բաղադրիչով կազմված բուսանունների լեզվա-ազգագրական վերլուծություն»

16:25 - 16:40 Սրճադահլար

ԵՐՐՈՐԴ ՆԻՍ.

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՅՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

նիստավարներ՝ *Սուրեն Հորոսյան, Թամար Հայրապետյան*
16:40 – 18:40

- **Արմեն Սարգսյան** (ՀԱԻ, ք.գ.դ.)
«Ծոռության թեման հայոց երգիծական բանարվեստում»
- **Էսթեր Խենչյան** (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Կանանց թեման հայ բանահյուսության շահաբայան պյուժեներում»
- **Մարինե Խենչյան** (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Բնաշխարհը ներկայացնող օգնականները հայ ժողովրդական հեքիաթներում»
- **Լուսինե Հայրիյան** (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Մազի ծիսապաշտամունքային նշանակությունները հայ ժողովրդական հեքիաթներում»
- **Սվետլանա Վարդանյան** (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Արցախում գրառված ծիսական երգերի նմուշներ»

19:30 ԸՆԹՐԻՔ

Հունիսի 22, շաբաթ, 2019 թ.

Ծաղկաձոր, Գրողների միության հանգստյան տուն

ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍ

նիստավարներ՝ *Արմեն Պետրոսյան, Գոհար Սյրեփանյան*

10:00 – 12:05

- **Հայկ Համբարձումյան** (ՄՄ / ԵՊՀ, ք.գ.թ.)
««Ռուստամ Զալ» վիպաշարի ժանրային յուրահատկությունները»
- **Սուրեն Հորոսյան** (ՀԱԻ, պ.գ.թ.)
«Քարի պաշտամունքի դրսևորումը Վայոց ձորի Արենի գյուղի «Սղաքար»-ի հետ կապված ծեսերում»
- **Միեր Քումունց** (ԳորՊՀ, ք.գ.թ.),
Լուսինե Ներսիսյան (ԳորՊՀ, ք.գ.թ.)
«Մի քանի անունների ստուգաբանություն՝ պատմաազգագրական տեղեկությունների հենքով (պատմական Սյունիք)»
- **Նվարդ Վարդանյան** (ՀԱԻ, ք.գ.թ.)
«Այգու իմաստաբանությունը հարսանեկան երգերի համապատկերում»
- **Կարեն Հովհաննիսյան** (ՀԱԻ)
«Բանահյուսական Քյոսա-Քաչիկ-Քաչալի կերպարը՝ որպես տրիքստեր»

12:05 – 12:15 Սրճադադար

ԱՌԱՋԻՆ ՆԻՍ.

ՄԻՋՆԱԴԱՐԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նիստավարներ՝ *Յակոբ Չոլաքեան, Արուսյակ Սահակյան*

12:15 – 13:55

- **Վանո Եղիազարյան** (ՎՊՀ, ք.գ.դ., պրոֆ.)
«Հովհաննես Կոզեռն Տարոնացին և նրա մատենագրությունը»
- **Աննա Սյրեփանյան** (ԵՉՏԹ)
«Հայ և ֆրանսիական տաղերգությունը 12-13-րդ դարերում»
- **Միրանուշ Փարսադանյան** (ԳԻ)
«Հովհաննես Միրզայան Վանանդեցի և Միմոն Ապարանեցի»

- **Գրեկոս Գասպարյան** (ԵՊՀ)
«Կանանց կերպարները «Սանա ծոեր»-ի և «Շահնամե»-ի ամուսնության սյուժեներում»

14:00 – 15:00 ՃԱՇԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ.

ՍՏՈՐԻՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՎԱՆԴԱՉՐՈՒՅՑՆԵՐ

նիստավարներ՝ *Արմեն Սարգսյան, Էսթեր Խենչյան*

15:00 – 17:05

- **Յակոբ Չոլաքեան** (ՀԱԻ / ԼԻ, պ.գ.դ.)
«Չար ոգիները Քեսապի հայոց հաւատալիքներուն մէջ»
- **Հասմիկ Գալստյան** (ՀԱԻ)
«Իսլվիկի հավատալիքը՝ բերքահավաքի և նավասարդյան տոնակատարությունների համատեքստում»
- **Քրիստինա Այվազյան** (ՀԱԻ)
«Ադամական մեղքը հայկական ավանդազրույցներում»
- **Սիրանույշ Առաքելյան** (ՀԱԻ)
«Սրբազան տարածքը և դրա պատկերացումները հայ վիպապատմական բանահյուսության մեջ»
- **Հարություն Խոսրոսյան** (ՊԻ)
«Վերին Տիգրիսի ավազանի («աշխարհացոյցյան» Աղձնիք) հոգևոր-պաշտամունքային վկայություններն՝ ըստ սեպագիր աղբյուրների»

17:05 - 17:15 Սրճադահլար

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ.

ԱՍՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

նիստավարներ՝ *Հայկ Համբարձումյան, Քրիստինա Այվազյան*

17:15 – 18:55

- **Լուսինե Ղոնջյան** (ՀԱԻ / ԳՊՀ, բ.գ.թ.)
«Հմայական բանաձևերի դրսևորումները հայկական ժողովրդական երգերում (հայրեններ, անտունիներ և խաղիկներ)»

- **Սվեարյանա Մանուչարյան** (ԳորՊՀ, ք.գ.թ.)
«Բանահյուսական բանաձևային ժանրերը Կապանի խոսվածքներում»
- **Համիկ Մարիկյան** (ՇՀՀԿ)
«Ցանկության բանաձևերի բաշխվածությունը բանահյուսական օրորոցային տեքստերում (հայկական և անգլիական լեզվական միջավայրերում)»
- **Գայանե Միրիբյան** (ԳՊՀ)
«О некоторых особенностях армянских и русских обрядовых свадебных величальных песен»

Զեկուցման համար տրվում է 15-20 րոպե:

Հարցերի համար՝ 5 րոպե:

18:55 – 19:10 Դադար

19:10 – 19:40 ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՒ ԱՄՓՈՓՈՒՄ

20:00 ՄԵԿՆՈՒՄ ԾԱՂԿԱԶՈՐԻՑ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԳորՊՀ – Գորիսի պետական համալսարան
- ԳՊՀ – Գավառի պետական համալսարան
- ԵԿՊԿ – Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա
- ԵՉՏԹ – Եղիշե Չարենցի տուն-թանգարան, Երևան
- ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
- ԵՊՄՀ – Երևանի պետական մանկավարժական համալսարան

ՀՀ ԳԱԱ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիա

- ԱԻ – Արվեստի ինստիտուտ
- ԳԻ – Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ
- ԼԻ – Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
- ՀԱԻ – Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
- ՊԻ – Պատմության ինստիտուտ

ՄՄ – Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան

ՇՀՀԿ – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի

ՎՊՀ – Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան

ՆԵԿՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Անժեղա Ամիրիսանյան

(ՀԱԻ)

**Գայլ բաղադրիչով կազմված բուսանուկների
լեզվա-ազգագրական վերլուծություն**

Հայերենի բարբառներում բավական տարածված են կենդանիների անուններով կազմված վայրի բույսերի անունները, որոնց շարքում առանձնահատուկ տեղ են գրավում *գայլ* բառով կազմվածները: Դրանք այն բույսերն են, որոնց հատկությունները նմանեցվել են գիշատիչ այս կենդանու բնույթին: Նշված բույսերը սննդում չեն կիրառվում, ունեն տիպիկ հոտ և մեծ մասամբ թունավոր են: Դրանք գործածվել են ժողովրդական բժշկության մեջ, իսկ մի մասն ունի նաև չարխափան գործառույթ:

Գայլ արմատով բուսանունները կազմվել են՝

- ըստ գայլի մարմնի որևէ մասի հետ նմանության (օրինակ՝ *գայլու վիզ, գելու սկնջիկ, գայլի թաթ, գայլու րոտիկ* են):
- ըստ գայլի խեղդող բնույթի. այլ բույսերի փաթաթվող և վնասող բույսեր (*գայլ խոտ, գայլուկ* են):
- մշակովի որոշ բույսերին նմանեցվելու պատճառով (*գայլու մաղաղանոս, գայլու սիսրոտ, գայլու փանձ, գայլախնձոր, գայլի խաղողն*):
- որոշ բույսերի ոչ-պիտանի տարատեսակներ լինելու պատճառով (*գայլարոխ, գայլու բամպու* են):
- ըստ կենդանու վրա՝ բույսի թողած ազդեցության (*գելվժենի* են):

Գայլ արմատով կազմված մի շարք բուսանունների բացատրությունը պարզ չէ, դրանք կարող են ունենալ մի քանի մեկնաբանություն (*գելպտուկ, գայլու ձ/ցնձաղիկ, գելկակաչ, գայլու թառա, գայլու բանջար, գայլ մամուխ* են):

Բացի նշված բույսերից, գայլերի հետ կապված ժողովրդական հավատալիքներին են առնչվում նաև սնկերը: Հայոց ավանդական ուտեստի համակարգում դրանք չնչին կիրառություն ունեն, համարվում են վնասակար կամ թունավոր: Այդ իսկ պատճառով ոչ-ուտելի սնկերն, աղերսվելով մարդու համար չափազանց վտանգավոր գիշատչին՝ գայլին, ստացել են *գայլասունկ* ընդհանրական անվանումը: Թունավոր համարվելով՝

գայլասունկը կոչվում է նաև *օձու սունկ*, *սապրանի սունկ* կամ *դիվասունկ*:
Թերևս, վնասակարությանը պայմանավորված՝ հայկական ժողովրդական հանելուկներում սնկերը կապվում են գայլի հետ, համարվում գայլի բաժին (մեկ ոտանի, մի գլխանի, / ծնվելուց հետո գայլը կտանի):

Քրիստիան Այվազյան (ՀԱԻ)

Ադամական մեղքը հայկական ավանդազրույցներում

Մեղքի ըմբռնումներն արտացոլող հայկական ավանդազրույցները բազմաթիվ են: Սույն գեկուցման մեջ անդրադարձ է կատարվում Ադամին ու Եվային առնչվող գրույցներին: Դրանք մեծ մասամբ ներկայացնում են արդեն իսկ դրախտից վտարված նախաստեղծ մարդկանց: Շատ քիչ է պատահում, որ ավանդազրույցներում ներկայացվի պտղի ճաշակումը կամ բանահյուսական մեկնություն ստանա չարի ու բարու գիտության ծառի կամ առաջին մեղսագործության (մարդկային իղձ, սեռական ակտ) էությունը:

Ստուգաբանական ավանդազրույցներում տրվում է *ադամանութ*, *արուսյակ*, *օձություն անել*, *օձի լեզու թափել* բառերի ու դարձվածքների բանահյուսական բացատրությունը, ինչպես նաև «*տղամարդը պետք է թողնի իր հորն ու մորը և գնա կնոջ ետևից*» աստվածային պատվիրանի առաջացումը: Այդ ավանդազրույցներում Ադամն ու Եվան հիմնականում արդեն իսկ վտարված են դրախտից և խավարից սարսափելով՝ իրենց հոգիները կամ իրենց սերունդների հոգիները վաճառում են սատանային:

Սատանան նույն աստվածաշնչյան պատկերացումների կերպավորումն է՝ ստախոս, որը գրեթե բոլոր ավանդազրույցներում իբրև թե լուսավորում է աշխարհը Ադամի ու Եվայի համար: Նրա ստախոս և խաբեբա լինելը փաստվում է նաև ժողովրդական ասացվածքներով:

Բացի մարդկության նախահայր լինելուց՝ Ադամն ավանդազրույցներում հանդես է գալիս նաև որպես մարդու ազահությունը խորհրդանշող ընդհանրական կերպար, որի միջոցով փորձ է արվում բացատրելու, թե ինչու՝ են մարդիկ այդքան շատ սիրում ոսկին: Եւ մի քանի ավանդազրույց էլ հաստատում են «*մարդու աչքը մի բռտ հողը կկշտագնի*» ասացվածքի, որի մասին կան նաև հեքիաթներ, բայց արդեն, իհարկե, չեն կապվում Ադամի անվան հետ:

Միրանույշ Առաքելյան

(ՀԱԻ)

Սրբազան տարածքը և դրա պատկերացումները հայ վիպապատմական բանահյուսության մեջ

Վիպապատմական բանահյուսության մեջ կարևոր դեր ունի սրբազան տարածքը, ուր մշակութային հերոսները կատարում են սրբագործման կամ անցումային ծես, որից հետո «իրավունք են ստանում» ստանձնելու իրենց առաքելությունը: Սրբազան տարածքի մարմնավորումն է օջախի կամ տոհմի սուրբը, ով հանդես է գալիս եկեղեցու տեսքով և կրում է Ս. Աստվածածնի անունը:

Սրբազան տարածք են համարվում ջրի օրինված ակունքը (Կաթնաղբյուր), թոնիրը: Հերոսների կողմից խիստ կարևորվում է սրբազան տարածքի կազմակերպումը, անվանադրությունն ու պահպանությունը, ինչը հիմնականում ուղեկցվում է տեսիլքով կամ երագով, որում հրահանգվում է թե՛ կառուցվելիք տարածքի հատակագիծը (Մասուն, Ս. Էջմիածին), թե՛ արդեն կառուցված մեհյանը եկեղեցու վերածելու ուղին («Մորոս»):

Ուշագրավ է սրբազան տարածքի կառուցումից հետո դրա կազմակերպման և պահպանության գործընթացը, երբ այն վերածվում է համայնքային կամ համագգային նշանակության ուխտավայրի: Սրբազան տարածքներն ունեն միմիայն իրենց հատուկ գործառույթներ և գորություն ու իրենց հիմքում կրում են կան բուժիչ աղբյուր (*Ս. Տիկին, «Մորոս»*) կան սրբազան գերեզման (*Մարութա Բանձր Աստվարածին, «Սասնա ծռեր»*) կան սրբագործված տարածք (Ս. Էջմիածին):

Լուսինե Աւետիսեան

(ԳԻ, բ.գ.թ.)

Հացի պաշտամուկը եւ ինքնութիւն.

լեզուիմաստասիրութիւն

- Երկրագործութիւնը որպէս նստակեցութեան և նոր քաղաքակրթութեան հիմք: Հացի արարումը որպէս կենսակերպ՝ հողի հերկից մինչև թոնիր:
- Հացի համամարդկային սրբացում: Միասերիաներից մինչև գեղարուեստական կերպարումներ: Հացի խորհուրդը կրօնական աշխարհընկալման հիմքում:

- Քրիստոսի խօսքը՝ «Առէ՛ք, կերայ՛ք, այս է մարմին իմ», վերանկերպումն է մարդկության հնագույն աշխարհընկալման: Հաց բառն ինքնին այդ ձևակերպման գաղափարական ամփոփումն է:
- Հաց բառը խորհրդանշական մտածողության դրսևորումներից է, գեղարուեստական փոխաբերություն:
- Հաց բառի ստուգաբանական փորձերն ու առաջարկուող նոր վարկած:

Հասմիկ Գալստյան

(ՀԱԻ)

Խլվլիկի հավատալիքը՝ բերքահավաքի և նավասարդյան տոնակատարությունների համատեքստում

Սույն գեկուցման քննության առարկան՝ հայոց ստորին առասպելաբանության մեջ և ժողովրդական սնահավատական գրույցներում համեմատաբար քիչ հանդիպող կերպարներից մեկն է՝ *խլվլիկը*՝ իր գործառույթներով ու դրսևորման ձևերով:

Խլվլիկ կոչվող ոգու մասին հիշատակություններ կան պատմական Հայաստանի Պարսկահայք և Վասպուրական նահանգների բանահյուսական և ազգագրական նյութերում. դրանք իրենց արտացոլումն են գտել նաև գեղարվեստական գրականության մեջ: Առկա նյութերն ու ուսումնասիրությունները թույլ են տալիս *խլվլիկ* ոգուն քննել տոմարի՝ աշուն-ձմեռ անցման և նավասարդյան տոնակատարությունների համատեքստում:

Վան-Վասպուրականում *խլվլիկը* արտերում բնակվող ոգի է, հանդես է գալիս միայն աշնանը՝ բերքահավաքի ժամանակ, իսկ Պարսկահայքի հոյ և Սալմաստ գավառներում՝ նավասարդյան ծիսաշարում (*Խիսպիլիկ* անվամբ հանդես է գալիս միայն Հարքում):

Գրեւրա Գասպարյան

(ԵՊՀ)

Կանանց կերպարները «Սասնա ծռեր»-ի և «Շահնամե»-ի ամուսնուլթյան սյուժեներում

Համաշխարհային էպիկական ժառանգության այս երկու խոշոր նմուշներում՝ հայոց «Սասնա ծռեր»-ում և պարսից «Շահնամե»-ում, կան բազմաթիվ գուգահեռներ՝ կերպարների, նրանց հատկանիշների և գործողությունների, առասպելական, վիպական երևույթների նմանություններ, ինչպես նաև նման կամ միևնույն երևույթի տարբեր դրսևորումներ: Մեր զեկույցը նվիրված է երկու էպոսների կանանց կերպարների համեմատական ուսումնասիրությանը՝ կապված ամուսնության դրվագների հետ: Հետազոտությունը կատարվել է «Սասնա ծռեր»-ի՝ մոտ երկու տասնյակ պատումների հիման վրա: Երկու էպոսներում էլ հետաքրքիր և կոլորիտային են ամուսնության սյուժեները, որոնցում վառ ընդգծված են կանանց կերպարները՝ մի շարք ընդհանրություններով:

Հերոսուհու նախաձեռնող բնավորություն, հերոսի հանդեպ առաջին քայլը անելու համարձակություն (Բանդույթ-Ռուդարե): Այս հատկությունները դրսևորվում են ինչպես նման (օրինակ՝ աղջկա գովքը հերոսի մոտ), այնպես էլ որոշ պատումներում տարբեր գործողություններով (օրինակ՝ նամակ գրելը «Սասնա ծռեր»-ում և անմիջապես հերոսի մոտ գնալը «Շահնամե»-ում): Ընդհանրություններից մեկն այն է, որ երբեմն ամուսնությանը խանգարող խոչընդոտներ են առաջանում, բայց եթե «Շահնամե»-ում պատճառները արտաքին են, ապա «Սասնա ծռեր»-ում խոչընդոտներ են ստեղծում կանայք՝ պայմաններ դնելով հերոսի առաջ: Երկու էպոսներում էլ կանայք անսահման նվիրված և հավատարիմ են ընտրյալ հերոսին: Հետաքրքիր նմանություններից մեկը՝ ամուսնությունից առաջ հերոսի և հերոսուհու մենամարտի տեսարանն է (Սոհրաբ-Գորդաֆերիդ, Դավիթ-Բանդույթ, Մհեր-Գոհար):

Ամուսնության սյուժեներում և կանանց կերպարներում տարբերությունների միջոցով էլ դրսևորվում են հայերի և իրանցիների ազգային առանձնահատկությունները:

Տորք Դապայան

(ՀԱԻ / ԼԻ, ք.գ.թ.)

Հավլունի թրի մասին դիցաբանական պատկերացումները և երկաթի առաջացումը

Առասպելական Հավլունի թրի մասին հավատալիքներն ու ավանդազրույցները փոխաբերաբար կամ երբեմն ուղղակիորեն ցույց են տալիս դրա երկնային ծագումը, այսինքն՝ Հավլունի թրի առաջացումը երկնաքարից, որն ընկնում է երկրի վրա կամ լճի մեջ: «Մասնա ծոեր» էպոսում այս թուրը կոչվում է Կայծակե (*Կեծակին*) և դարձյալ ունի երկնային-ամպրոպային էություն: Հայոց դիցաբանության մեջ երկնաքարե մոգական թուրը տարբեր դյուցազունների գենքն է՝ Մանասար, Տրդատ, Պոռշ, Դավիթ, Միեր, Հովհան Օձնեցի ևն: Երկնային զարմանահրաշ թրի մասին պատկերացումը տարածված է եղել նաև այլ ժողովուրդների մեջ. այն հատկապես վառ է արտահայտված սկյութական և կելտական աշխարհնկալումներում: Զեկուցման մեջ փորձ է արվում համակարգային վերլուծության ենթարկելու նշված տեղեկությունները՝ դրանք համադրելով երկաթ մետաղի հայտնագործման մասին առկա մեր գիտելիքների և լեզվաբանական այն տվյալների հետ, որոնք վերաբերում են *երկաթ* բառի ստուգաբանությանը:

Վանո Եղիազարյան

(ՎՊՀ, ք.գ.դ., պրոֆ.)

Հովհաննես Կոզեռն Տարոնացին և նրա մատենագրությունը

Հայ միջնադարյան մատենագիր, տոմարագետ, աստվածաբան, մեկնիչ, պատմիչ Հովհաննես Կոզեռն Տարոնացուն հայագիտության մեջ անդրադարձել են Մ. Չամչյանցը, Ս. Մոմայանը, Գ. Զարբհանայանը, Ե. Դուրյանը, Ն. Մառը, Ն. Քարամյանցը, Բ. Սարգիսյանը, Ղ. Ալիշանը, Մ. Օրմանյանը, Ա. Զամինյանը, Ն. Ակինյանը, Ե. Շահագիզը, Հր. Աճառյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Հովհաննիսյանը, Հ. Քյուրոսյանը, Պ. Սևակը, Ն. Պողարյանը, Գ. Մանուկյանը, Կ. Քիպարյանը, Վ. Եղիազարյանը, Զ. Էյնաթյանը, Ռ. Վարդանյանը, Վ. Առաքելյանը, Պ. Հովհաննիսյանը, Հ. Քյոսեյանը, Պ. Խաչատրյանը ևն:

Հայ մատենագիրներից Հովհաննես Կոզեռնի մասին վկայություններ են թողել նրա ժամանակակիցը՝ Արիստակես Լաստիվերցին (ԺԱ. դ.), Մատթեոս Ոռոհայեցին (ԺԱ.–ԺԲ. դդ.), Մխիթար Անեցին (ԺԲ. դ.), Սամվել

Անեցին (ԺԲ. դ.), Սմբատ Սպարապետը (ԺԳ. դ.), Մխիթար Այրիվանեցին (ԺԳ. դ.): Հովհաննես Կոզեռնի անունը հիշատակել են նաև ուշ միջնադարի պատմիչներ Գրիգոր Կամախեցին (ԺԶ.-ԺԷ. դդ.), Առաքել Դավրիժեցին (ԺԶ.-ԺԷ. դդ.), Մինաս Համդեցին (ԺԷ. դ.): Կոզեռնի անունը հիշատակվել է նաև Անանուն ժամանակագրության մեջ և Շարակնոցում:

Հովհաննես Կոզեռնի մատենագրությունն իր բնույթով հիմնականում աստվածաբանական գրականություն է՝ *Էկզեզեարիկայի* (աստվածաշնչյան մեկնաբանություն) և տոմարագիտության ուղղվածությամբ: Բացառություն է Բագրատունյաց պատմությունը, որից մեզ է հասել մի պատահիկ: Թերևս, մեզ ամբողջությամբ չհասած այդ պատմությունն էլ պետք է որ Կոզեռնի ստեղծագործությանը հաղորդեր պատմագեղարվեստական արժեք:

Էպոեր Խեմյան

(ՀԱԻ, ք.գ.թ.)

Կանանց թեման հայ բանահյուսության շահաբասյան սյուժեներում

Հայ բանահյուսության շահաբասյան սյուժեներում մոտիվների մի մեծ խումբ ներկայացնում է կնոջ կերպարի տարատեսակ դրսևորումներ: Ըստ այդ մոտիվների՝ կին արարածը հանդես է գալիս իր բոլոր բարեմասնություններով ու թերություններով և անմիջականորեն առնչվում է Շահ Աբասին, որը գործուն մասնակցություն է ունենում սյուժեի զարգացմանը, նպաստում է կանանց կերպարների գործողությունների ծավալմանը և համապատասխան միջամտությամբ ուղղորդում ու գնահատում է կնոջ վարքագիծը:

Զեկուցման մեջ քննության են առնվում շահաբասյան սյուժեների հետևյալ ամենատարածված մոտիվները.

- ա) Հավատարիմ և անհավատարիմ կանանց թեմայով շահաբասյան սյուժեների տարբերակները կառուցված են հակադրության սկզբունքով: Պատումներում նախ ներկայացվում են կնոջ անհավատարմությունն ու ամուսնու սպանությունը, որին հետևում է Շահ Աբասի հրամանը՝ կանացի սեռը ոչնչացնելու մասին, ապա հակադրվում է անձնագոհ ու հավատարիմ կնոջ մոտիվը, ով ստիպում է շահին փոխել իր հրամանը:
- բ) Շահ Աբասի կանանց և աղջկա վերադաստիարակման մոտիվը:

զ) Շահ Աբասի կողմից երեք քույրերի ցանկությունների գաղտնալսման մոտիվը: Նա առաջին երկուսի բաղձանքն իրագործում է, իսկ երրորդին ոչնչացնելու հրաման է տալիս: Ըստ պատումի գարգացման՝ երրորդ քրոջ ցանկությունն, ի հեճուկս Շահ Աբասի, կատարվում է:

Այս բոլոր մոտիվների հիմքում ընկած է Շահ Աբասի՝ ծպտված շրջագայելու մոտիվը, ինչը հնարավորություն է տալիս անձամբ տեղեկանալու իր թագավորությունում կատարվող իրողություններին և իր արքայական միջամտությունն ու վճիռը իրագործելու:

Մարինե Խեանյան

(ՀԱԻ, ք.գ.թ.)

Բնաշխարհը ներկայացնող օգնականները հայ ժողովրդական հեքիաթներում

Մարդուն շրջապատող բնաշխարհը ներկայացնող անտառը, ծառը, աղբյուրը, գետը, ծովը, լճակը, սարը, ժայռը, քարայրը, քարը, միաժամանակ լինելով կապող օղակ անդրաշխարհի հետ, հաճախ հեքիաթի հերոսի համար դառնում են նվիրատուներ կամ խորհրդատուներ:

Ջեկուցման մեջ ներկայացվելու են բնաշխարհը ներկայացնող հետևյալ համակարգերը.

- ա) ծով → գետ → աղբյուր ջրային համակարգ,
- բ) անտառ → ծառ → կոճղ → փայտ → տերև,
- գ) սար → քարայր → ժայռ → սալաքար → քար:

Այս երեք համակարգերն իրենց տարրերով հայկական հեքիաթներում ծառայում են որպես միջոց՝ հերոսի կապն անդրաշխարհի հետ ապահովելու համար: Աղբյուրից է դուրս գալիս անդրաշխարհի դերվիշն իր շներով, գետի միջոցով է հերոսն անցում կատարում անդրաշխարհից այսրաշխարհ, ծովի միջոցով է հերոսը ստանում բազմատեսակ հրաշագործ առարկաներ: Մարը, քարայրը, ծառը խորհրդանշում են այս աշխարհի հետ ստորերկրայքի կապը, նն:

Ջեկուցմամբ հանգամանորեն կներկայացվեն Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջանների հեքիաթներում հանդիպող՝ բնաշխարհը ներկայացնող օգնականները:

Հարություն Խողանյան

(ԴԻ)

Վերին Տիգրիսի ավազանի («աշխարհացոյցյան» Աղձնիք)
հոգևոր-պաշտամունքային վկայություններն՝
ըստ սեպագիր աղբյուրների

Վերին Տիգրիսի ավազանը պատմաաշխարհագրական այն տարածքն է, որը, լինելով Հյուսիսային Միջագետքի անմիջական հարևանը, մշտապես կապել է Հայկական լեռնաշխարհը ողջ Միջագետքի հետ: Այս շրջաններով են անցել հնագույն առևտրական ուղիները, որոնք ձգվել են Հարավային Միջագետքից դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը: Պատմական տարբեր ժամանակներում այստեղ են ապրել և իրենց մշակութային հետքը թողել բազում ցեղեր ու էթնոսներ, որոնք նաև վկայված են միջագետքյան սեպագիր աղբյուրներում: Դրանցից առավել չափով տեղեկություններ են հաղորդում հատկապես քաղական և ասորեստանյան սեպագիր արձանագրությունները: Այդ հարուստ սկզբնաղբյուրները ոչ միայն ռազմաքաղաքական, շինարարական կամ տնտեսական բազմաբնույթ տեղեկություններ, այլև երբեմն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վկայություններ են պարունակում Վերին Տիգրիսի ավազանի հոգևոր ընկալումների և պաշտամունքի վերաբերյալ:

Հայտնի է խոտիական առասպելը ամպրոպի և փոթորկի աստված *Թեշուրի* ծագման վերաբերյալ: Ըստ այդ առասպելի՝ Թեշուրը ծնվում է իր հայր *Կումարբիից*, ով խոտիների գլխավոր աստվածն էր: Հետաքրքրական է, որ Վերին Տիգրիսի ավազանում՝ մասնավորապես Հայկական Տավրոսի լեռնակղզում առաջացած Շուրբիա պետական կազմավորման տիրակալ Նիկ-Թեշուրը և իր որդիները, ինչպես Միտանիի վերնախավի որոշ ներկայացուցիչներ, իրենց անվան երկրորդ մասում կրել են *Թեշուր* աստծո անունը: Նվազ հետաքրքրական չէ նաև այն, որ Թեշուրի եղբայր *Արանձախը* մարմնավորում էր Տիգրիս գետը, որի պաշտամունքն, ըստ ամենայնի, ոչ միայն տարածված էր Հյուսիսային և Հարավային Միջագետքում, այլև՝ առավել չափով Վերին Տիգրիսի ավազանում, որտեղ և գտնվում են նրա սրբազան ակունքները:

Հայկ Համբարձումյան

(ՄՄ / ԵՊՀ, ք.գ.թ.)

«Ռուստամ Զալ» վիպաշարի ժանրային յուրահատկությունները

Ժանրային ինչ նկարագիր ունի հայ-իրանական «Ռուստամ Զալը» վեպը, կարող ենք այն էպոս համարել, որքանով է համապատասխանում դասական էպոսի ժանրային հատկանիշներին: Ինչ հարաբերություններ ունի այս վիպաշարը «Մասնա ծոեր»-ի և ժողովրդական հեքիաթների հետ: Զեկուցման մեջ այս հարցերը քննարկվում են «Ռուստամ Զալ»-ի պատմականության և ազգային նկարագրի, հերոսականության բնույթի, կառուցվածքային ամբողջականության, առանձին մասերի գաղափարական միասնության ներկայացմամբ:

Վիպական մոտիվների առանձնացմամբ համեմատություն է կատարվում «Մասնա ծոեր»-ի, ժողովրդական հեքիաթների համապատասխան մոտիվաշարերի հետ: Քննվում են ընդհանրությունների բնույթը և հնարավոր փոխազդեցությունները: Մասնակի անդրադարձ է կատարվում այս վիպաշարում իրացվող առասպելական մոտիվներին:

Վազգեն Համբարձումյան

(ԼԻ / ԵՊՄՀ, ք.գ.դ., պրոֆ.)

Ջնդեվրոպական բանաստեղծական խոսքի կառուցման երկատումային բաշխվածությունը ցեղակից լեզուների առնչությունների համատեքստում

1. Երկատումային (*դիխոտոմիկ*) բաշխվածությամբ մտածողությունը հատուկ է եղել հնդեվրոպական ժողովուրդների նախամշակույթին, որի արտահայտություն նախալեզվի տարբեր բնույթի արտացոլումներ գտնում ենք ցեղակից լեզուների վիպական (առասպելական-բանաստեղծական) պատկերացումներում:
2. Հայ. (*ե)րկ- / ար-* (<h. -ե. *k⁰r-) «երկու կես անել (մեկի մյուսը՝ երկատում, կես-կես, զատելը ևն)» արմատի համեմատական-տիպաբանական տարբերակայնությունը հիմք է հնդեվրոպական ծագման՝ նման հարաբերակցությամբ ամբողջություն կազմող միավորների (իրայինների) լեզվական-ստուգաբանական, ինչպես նաև առասպելական-բանաստեղծական նոր մեկնաբանության կամ պարզաբանումների համար:

3. Հնդեվրոպական ժամանակակից լեզուների մեջ տարբեր չափերով արտացոլում գտած՝ նման խոսքի ուսումնասիրությունը գիտության նոր պայմաններում ունի ուրույն կարևորություն և լայն հնարավորություններ. հայերենը ևս տալիս է այդ հնարավորությունը:

Թամար Հայրապետյան

(ՀԱԻ / ԵՊՀ, ք.գ.դ.)

Ղազարոս Աղայանի «Անահիտ»-ը՝ ըստ Արամ Ղանալանյանի

Ղազարոս Աղայանի բազմաժանր ստեղծագործության մեջ հեքիաթի գրական տեսակը սկսվում է «Անահիտ»-ով: Այն գրվել է Շուշիում, 1881թ. սկզբին և նույն թվականին լույս է տեսել առանձին գրքով:

Ղ. Աղայանի մշակած «Անահիտ» հեքիաթը, Ա. Ղանալանյանի դիտարկմամբ, խորհրդային շրջանի հայ գրականագետներից և քննադատներից չի արժանացել համապատասխան գնահատականի: Մասնագետները բավարարվել են հիշյալ երկի բովանդակությունը շարադրելով՝ զանց առնելով ժողովրդական բանահյուսության փոփոխակների հետ «Անահիտ»-ի ունեցած կապի խնդիրը և այն գրական ստեղծագործական աշխատանքը, որ կատարել է Աղայանը ժողովրդական հեքիաթանյութը մշակելու ընթացքում:

Ղ. Աղայանի մշակած «Անահիտ»-ի դիպաշարը իր արտահայտությունն է գտել Հանս-Յորգ Ութերի «Միջազգային հեքիաթների տիպերը» նշագանկի 888A* թվահամարին համապատասխանող հայկական հեքիաթներում, որոնք տարածված են եղել պատմական Հայաստանի մի շարք գավառներում՝ Արցախ, Գուգարք-Լոռի, Տուրուբերան-Մուշ, Մոկս, Մեղրի և այլուր:

Ժողովրդական հեքիաթախմբի՝ մեզ հետաքրքրող տարբերակներից ամենաձավալունը գրառված է Տուրուբերան-Մուշից՝ վեց էջ: Աղայանի մշակած «Անահիտը» 22 էջանոց ստեղծագործություն է, որտեղ Անահիտը հայ կնոջ խորհրդանիշից վերածվում է գործնի:

Ղ. Աղայանը ժողովրդական բանավոր ավանդությունը մշակել է, հարստացրել կենդանի ու գրավիչ երկխոսություններով, բարոյագաղափարական նպատակադրումներով՝ պահպանելով հեքիաթի ժանրային առանձնահատկությունները, վիպական հետաքրքրաշարժ մանրամասները:

Լուսինե Հայրիյան

(ՀԱԻ, բ.գ.թ.)

Մազի ծիսապաշտամունքային նշանակությունները հայ ժողովրդական հեքիաթներում

Հեքիաթը բանահյուսական խոսք է, որը սերտորեն աղերսված է պաշտամունքային տարրերին, առասպելներին և ծեսերին:

Մազերին վերագրվել են հմայական հատկություններ, և հեքիաթային մի շարք դիպաշարերում, որտեղ որոշակի նշանակություն ունի մազը (հմայական գործողությունների զգալի մասը կապված է մարդկային և հեքիաթային էակների մազերի, կենդանիների մորթու հետ), գործում է հումեռպատիկ հմայության սկզբունքն ու տրամաբանությունը:

Հեքիաթային որոշ դիպաշարեր տարողունակ են հուղարկավորության ծեսի նկարագրություններով. բացահայտվում են մահվանն առնչվող հավատալիքներ ու մազի պաշտամունքի դրսևորումներ (ներկայացվում է հարազատին կորցնելու ողբերգության առթիվ՝ ծամից կամ մորուսից կամավոր հրաժարվելու ինքնախարագանման սովորությունը, որը բխում է մազի պաշտամունքից և խորհրդանշում է սիրեցյալի հետ կամավոր մահանալու ցանկություն):

Կարեն Հովհաննիսյան

(ՀԱԻ)

Բանահյուսական Զյոսա-Քաչիկ-Քաչալի կերպարը՝ որպես տրիքստեր

Հայ բանահյուսության մեջ բավական տարածված կերպար է Քյոսա-Քաչալը: Այն ունի երկու կերպարային դրսևորում.

ա. «Էպիկական» Քաչիկ. մեծածավալ հեքիաթների հերոս, որոնցում, հաղթելով վիշապներին, զանազան սխրագործություններից հետո դառնում է թագավոր (Մանասարի տիպի հերոս):

բ. զվարճալի, կատակասեր (հաճախ՝ դաժան և անտրամաբանական), խաղասեր, միաժամանակ հնարամիտ և հիմար, խորամանկ, խաբերա:

Զեկուցման մեջ դիտարկվելու է Քաչիկի երկրորդ կերպարը: Ցույց են տրվելու այդ կերպարի *տրիքստերային* հատկանիշները, դուրս է բերվելու նրա գործողությունների մոտիվացիան և տրամաբանությունը, ավելի ճիշտ՝ տրամաբանվածության բացակայությունը:

Անրադարձ է կատարվելու նաև Բարեկենդանի գլխավոր հերոսին, որի անուններից մեկն էլ *Ջոսս* է:

Փոքր ժանրերում՝ կատակերգեր, կատակասերուկներ, Քաչալը դիտարկվելու է որպես ծաղրանքի առարկա:

Լուսինե Ղուեջյան

(ՀԱԻ / ԳՊՀ, ք.գ.թ.)

Յմայական բանաձևերի դրսևորումները հայկական ժողովրդական երգերում (հայրեններ, անտունիներ և խաղիկներ)

Ժողովրդական ստեղծագործություններն ունեն ժանրային տարբեր դրսևորումներ, որոնք առանձնակի բազմերանգություն են հաղորդում հորինվածքին:

Հայկական ժողովրդական անեծքներն ու երգումները, լինելով հմայական-կիրառական բանահյուսության նախնական տեսակներ և իրենց բնորոշ գծերով առանձնանալով ժողովրդական բանարվեստի մյուս տեսակներից, միաժամանակ սերտորեն կապված են դրանց հետ: Այդ կապն ի հայտ է գալիս բանահյուսության տեսակների՝ ինչպես այուժետային-կառուցվածքային յուրահատկությունների, պատկերավորման միջոցների, ժանրային ներքին որոշ նմանությունների, այնպես էլ այս կամ այն ստեղծագործության ամբողջական կամ հատվածային կիրառությամբ: Անեծքներն ու երգումները զանազան ձևերով առնչվում են քնարական ժանրի ստեղծագործություններին՝ երգերին, ինչը խոսում է վերոնշյալ բանաձևային կառույցների՝ հնուց ի վեր լայն գործածության, ինչպես և դրանց ու երգերի՝ ժողովրդի կյանքում ունեցած մեծ դերի մասին:

Զեկուցման մեջ քննության են առնվում հայկական ժողովրդական երգերի (հայրեններ, անտունիներ, խաղիկներ) և անեծքների ու երգումների բազմաբնույթ առնչությունները:

Սվեդրյանա Մանուչարյան

(ԳորԴՀ)

Բանահյուսական բանաձևային ժանրերը Կապանի խոսվածքներում

Կապանի տարածաշրջանի խոսվածքները բանագիտական տեսանկյունից ամբողջությամբ չեն ուսումնասիրվել և հարուստ են անտիպ բանահյուսական նմուշներով՝ օրհնանքներով, հանելուկներով, ավանդազրույցներով, առած-ասացվածքներով, աշխատանքային և օրորոցային երգերով, անեծքներով ևն:

Զեկուցման մեջ դիտարկել ենք խնդրո առարկա խոսվածքներում գործուն հանելուկների, օրհնանքների, անեծքների, առած-ասացվածքների լեզվաոճական և կառուցվածքային առանձնահատկությունները, պատկերավորման միջոցները, ինչպես և բանահյուսական տվյալ նմուշի՝ իբրև դարձվածային միավորի իմաստային-իմաստաբանական գործառությունը՝ համեմատելով ու զուգորդելով Սյունիք-Արցախ բարբառային գոտու այլ միավորների համապատասխան իրողությունների հետ:

Ուսումնասիրության ենթակա նյութը քննել ենք համաժամանակյա հայեցակետով՝ համեմատությամբ տալով նաև բանահյուսական այս կամ այն նմուշի կենսունակությունը տվյալ խոսվածքում: Զեկուցման նորությամբ կարելի է համարել այն, որ քննվող բանահյուսական նմուշները ներկայացված են Կապանի տարածաշրջանի խոսվածքներին բնորոշ հնչյունա-քերականական յուրահատկություններով, ինչն էլ, կարծում ենք, ավելի հետաքրքրական է դարձնում ուսումնասիրությունը:

Հասմիկ Մարիկյան

(ՇՀՀԿ)

Ցանկության բանաձևերի բաշխվածությունը բանահյուսական օրորոցային տեքստերում (հայկական և անգլիական լեզվական միջավայրերում)

Ցանկության բանաձևերը բանահյուսական օրորոցային տեքստերի տիրույթում ունեն առատ բաշխվածություն: Ուշաբժան է օրորների այն փունջը, որը խտացում է բանահյուսական այլ ժանրերի, մասնավորապես՝ առած-ասացվածքների: Օրորոցայինի և այլ ժանրերի միջև նկատելի են թե՛ միջտեքստային, թե՛ միջժանրային առնչություններ:

Օրորոցայինը՝ որպես օրհնանքաբովյա տեքստ, ունի կոնկրետ հաս-

ցեատեր, հատուկ ունկնդիր: Օրորասացը հաշվի է առնում մանուկ ունկնդրի սեռը. վերջինիս գործոնով պայմանավորված՝ անդրադարձ ենք կատարելու այն օրորներին, որոնք ուղղված են աղջիկ և տղա ունկնդիրներին:

Հայկանուշ Մեսրոպյան

(ԼԻ, ք.գ.դ.)

Բուսանունները Ա.Ղանալանյանի «Առաձանի»-ում

Բարբառային բառապաշարի քննության առումով նշանակալից է բուսանուններ իմաստային-թեմատիկ խմբի ուսումնասիրությունը: Այս բառաշերտի իմաստային, բառակազմական, ոճական, տարածագործական, ինչպես և լեզվական այլ խնդիրների հետազոտությանը կարող են օժանդակել նաև Ա. Ղանալանյանի «Առաձանի»-ում տեղ գտած այն առած-ասացվածքները, որոնցում գործածված են բուսանուններ: Հոդվածում կներկայացնենք այդ բուսանունները, դրանց ընդգրկած բարբառային տարածաքները, կխոսենք այդ եզրերի գործածության հաճախականության, իմաստային անցումների, փոխաբերացման, անձնավորման և լեզվական այլ առանձնահատկությունների մասին:

Գայանե Միրիքյան

(ԳՊՀ)

О некоторых особенностях армянских и русских обрядовых свадебных величальных песен

В статье проводится сравнительно-сопоставительный анализ армянских и русских свадебных величаний. Анализируются идейно-тематическая основа, особенности построения и стихосложения, ритуально-магические функции песен. Армянские величальные песни сохранили характерные для древнейших гимнических песен устойчивые художественные формы, символические образы и архаический ритуальный пласт, что отразилось в широком использовании формул-повторов, ритуальных зачинов, концовок-заклинаний, молитв - благопожеланий, представляющих собой традиционную магическую формулу, вытекающую из основного тематического содержания обряда.

Յակոբ Չոլաքեան

(ՀԱԻ / ԼԻ, պ.գ.դ.)

Չար ոգիները Քեսապի հայոց հաւատալիքներուն մէջ

Յօդուածը կ'անդրադառնայ Քեսապի հայոց հաւատալիքներուն մէջ գոյութիւն ունեցող շարք մը ոգիներու կամ իբրև այդպիսին գիտակցուող էակներու մասին պատկերացումներու, ինչպէս՝

Իշվուպ. այր մարդու այլանդակ կերպարանքով, խման ու շուայտ ոգի մը, որ կ'երևի կիներուն՝ անոնց մատանէն դուրս ելած պահուն,

պրլպրըր աճուգ, որ կերպարանք չունի, բայց կը պատահի յանկարծակի ցուրտի, տեղատարափ անձրևներու Փետրուար ամսուն, ու ծերերը կը տանի,

ճին, որ իբրև կ'ապրի որոշ տեղեր, մութի մէջ կը յայտնուի մարդոց, կերպարանքը՝ սարսափազդու, կրնայ մտնել մարդոց մէջ, մարդիկը խենթացնէ,

սալսանու/սալսանք, որոնք կրնան կերպարանափոխուիլ, կրնան ամէն բան չարաբաստիկ դարձնել,

ածդահաք. ասոնք ընդհանրապէս չորս հոգի են՝ հսկաներ, ու կ'ապրին հեռաւոր ու խուլ քարայրներու մէջ, մեծ գողօն ունին, մարդը կրնայ խաբել զանոնք ու գանձին հաւասարէ հաւասար տիրանալ,

մեզմէ լաւեր, որոնք անտեսանելի են, կ'ապրին տուններու, մութ ու կիսամութ սենեակներու մէջ:

Յօդուածը կ'անդրադառնայ նաև չարէն մարդը փրկող ծէսերուն: Համեմատական եզրեր ևս նկատել կը տրուին Հայկական բարձրասանդակի համարժէք ոգիներուն հետ:

Արմեն Պետրոսյան

(ՀԱԻ / ՄՄ, ք.գ.դ.)

Ժայռից ծնվող հերոսի առասպելը համեմատական համատեքստում

Արամ Ղանալանյանը, քննելով «կովկասյան Պրոմէթէս»-ների՝ հայոց Արտավազդի և Փոքր Մհերի, վրացական Ամիրանիի, արխազական Աբրսկիլի և մյուսների վերաբերյալ արտահայտված կարծիքները, գտնում է, որ նրանց՝ հայկական և վրացական ծագում ունենալու տեսակետները կապված են եղել ժամանակի գիտության մեթոդաբանական անկատարության և ազգայնականության դրսևորումների հետ: Այդ առասպելույթի հնագույն դրսևորման՝ խոռոխական Ուլիկումիի պյուժի

հայտնի դառնալը որոշ պարզություն մտցրեց նշված հարցում: Խոտիերենը, ըստ տարածված մի կարծիքի, ազգակից է հյուսիսկովկասյան լեզուներին, և այդ հերոսները հանդես են գալիս հատկապես մեր տարածաշրջանի առասպելներում: Մյուս կողմից, Փոքր Մհերի կերպարի նախորդը Վանի թագավորության գերագույն աստված Խալդին է (Ի. Դյակոնով): Զեկուցման մեջ փորձ է արվում հիմնավորելու հայկական, վրացական և կովկասյան՝ ժայռում փակված հերոսների, հոռուական Միթրայի և եվրոպական «ժայռում քնած հերոսների» ծագումը նույն կենտրոնից՝ Հայկական լեռնաշխարհից:

Արուսյակ Սահակյան

(ՀԱԻ / ԵԿՊԿ, ք.գ.թ.)

Արամ Ղանալանյան. վիպահավաք և վիպագետ

1. Արամ Ղանալանյան՝ վիպահավաք և վիպագետ. այս խնդիրն առաջնային է ոչ միայն այնու, որ վիպագիտության ընդհանուր դաշտում է, այլև այն հիմքով, որ իր խորքային էությանը դեռևս չի ուսումնասիրվել: Մարգիս Հարությունյանի մատենագիտական-վերլուծական ընդգրկուն հոդվածը ներկայացնում է այս խնդիրը՝ իբրև Արամ Ղանալանյան-բանագետի հիմնարար ուսումնասիրությունների անբաժանելի և կարևորագույն տարածք: Վեպի գրառման և ուսումնասիրության պատմությունը նախկինում հանգամանորեն քննված է, բայց արխիվներում դեռևս անտիպ և 1971-73 թվականներին նորահայտ պատումների գրառումը և հրատարակումը, վիպագիտական նոր ուսումնասիրությունները, որոնց հիանալի տեղյակ էր, բացում են քննության ավելի լայն դաշտ, որը և կներառի Արամ Ղանալանյան-վիպահավաքի ու վիպագետի անուրանալի ներդրումը:

2. Նախ՝ Արամ Ղանալանյանի գրառած երկու պատումի համեմատությունը «Սասնա ծռեր»-ի երեք ժողովածուներում հրատարակված 47 պատումի համատեքստում, մանավանդ որ վաղ՝ 1933 և 1936 թթ. գրառումներից են: Այս երկու պատումի դերը և նշանակությունն այն է, որ վեպի բովանդակային տարբերությունները և եզակի մտաիժներով շեղումներն ավելի քան ակնհայտ են: Եթե վեպի առաջնային արժեքը բոլոր պատումների բովանդակության նմանությունն է, շատ հաճախ՝ նաև նույնության մակարդակում, ապա տարբերությունները և եզակի շեղումները տանում են քննության բոլորովին այլ դաշտ: Այս դեպքում՝ եթե այս

երկու պատումը չգրառվեր, քննության հենց այդ դաշտը նկատելիորեն պակասավոր կլիներ:

3. Արամ Ղանալանյանը փորձառու վիպահավաք է. հենց միայն նրա երկու վիպասացի՝ Սպարկերտցի Փառիկի և Բաշկալեցի Վարդան Վարդանյանի մասին տրված մանրամասն տեղեկությունները՝ արտաքինի, պատմելաոճի նկարագրությունից մինչև կարևոր փաստեր, թե ումից է լսել և կամ որքան հաճախ է պատմել, նրա հավելյալ հարցերը և վիպասացի պատասխաններն ու բացատրությունները, որ բերում է տողատակին, դարձյալ փաստում են եզակի շեղում և երևան են հանում այնպիսի խնդիրներ, որոնք արդեն իսկ վեպ և վիպասաց ուսումնասիրության տիրույթում են: Այն, որ այս տիրույթն Արամ Ղանալանյանին հատուկ հետաքրքրել է, դա նույնպես փաստված է նրա մի աշխատանքում:

4. Քննվում են միայն մեկ վիպասացի՝ Սպարկերտցի Փառիկի պատումում առկա եզակի մոտիվներն ու դրանցով կազմված միջադեպերը: Մեկ պատումում հանդես եկող եզակի մի մոտիվը կարող է հանել քննության ընդլայն դաշտ և՛ իբրև շեղում, և՛ այդ շեղումը փաստող այլ պատումների համեմատականում: Եզակի մոտիվներով շեղումները կարող են մտնել նաև կերպարների տիրույթ: Այս խնդրի ամբողջական քննությունը կերպարների դաշտում է, բայց այստեղ բերվող սակավաթիվ պատումների դեպքում ևս շահեկանորեն քննելի է:

5. Եզակի մոտիվների զուգահեռները քննվում են Մոկաց թևի երեք պատումի ոլորտում՝ Մոկացի Հովակիմենց Ղազարի, Մոկացի Թումաս Պետրոսյանի և Գավաշցի Գրիգոր Փոխան Եղիազարյանի: Սպարկերտը, Մոկսը և Գավաշը Վանի նահանգի տարբեր գավառներն էին, և բացահայտվում է, որ տարբերություններն ու եզակի շեղում-մոտիվները հատուկ են և՛ տարբեր գավառների, և՛ նույն գավառի տարբեր գյուղերի վիպասացների պատմած պատումների:

Արևն Սարգսյան

(ՀԱԻ, ք.գ.դ.)

Ծռության թեման հայոց երգիծական բանարվեստում

Ծռության՝ պակասամտության թեմայով հայկական երգիծապատում-զվարճախոսությունները՝ անեկդոտները, տարբերվում են մյուս ժողովուրդների՝ խելապակասության թեմային առնչվող ստեղծագործություններից ոչ միայն հայոց լեզվի տարբեր շերտերի յուրահատուկ դրսևորումներով, այլև հայրենի բնաշխարհի բնակլիմայական պայմանների, աշխարհագրական տեղավայրերի ու դրանց առնչվող ավանդագրույցների, հայոց տեղանունների, անձնանունների և ազգային այլևայլ առանձնահատկությունների մատնանշմամբ, որոնք մեկ անգամ ևս հաստատում են այդ նմուշների հայկականությունը:

Իսկ եթե դրանց մի մասի մեջ նույնիսկ ուրիշ ժողովուրդների բանարվեստի նմուշների հետ ինչ-ինչ կողմերով նմանության եզրեր են նկատվում՝ երբեմն տեղիք տալով փոխառյալ լինելու ենթադրությունների, ապա այդ պարագայում անգամ նման նյութերն այնպես են մերված լինում մեր ազգային յուրահատկություններին, որ շատ հաճախ գրեթե անհնար է դառնում նմանատիպ պատումների առաջացման բուն հայրենիքը բացահայտելը:

Լիլիթ Միմոնյան

(ՀԱԻ, պ.գ.թ.)

Յայկական ժողովրդական չափածո առասպելներ և ավանդագրույցներ. շարունակելով Ա. Ղանալանյանի գործը

Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» դասական ժողովածուն 50 տարի եղել է հայ առասպելաբանի սեղանի գիրքը և մինչև օրս մնում է ավանդագրույցների առավել համապարփակ հավաքածուն:

Դա ամեննին չի նշանակում, որ այն չի կարող համալրվել բազմաթիվ նորագյուտ (դաշտային և Ա. Ղանալանյանին անհայտ մնացած) նյութերով: Ա. Ղանալանյանը, ղեկավարվելով ավելի շուտ առանձին բանահյուսական ժանրի (գրույցի), քան սյուժետային գծի կամ բովանդակային տարրերի սկզբունքով, ժողովածուի մեջ չի ներառել այն առասպելներն ու ավանդագրույցները, որոնք՝

ա. ի հայտ են գալիս ավելի ծավալուն բանահյուսական ստեղծագործությունների մեջ՝ որպես դրանց մաս,

բ. փոխանցված են չափածո, մասնավորապես՝ երգերի ձևով,

գ. մեզ են հասել հեղինակային մշակումների ձևով:

Դրանց թվին են պատկանում, մասնավորաբար, ծիսական, ուխտագնացության, սրբավայրերին, աստվածաշնչյան հերոսներին նվիրված, որն է պատմական դեմքի կամ իրադարձության հետ կապված, խոհափիլիսոփայական երգերը, նաև բուն երգ-առասպելները, որոնց մեջ կան ինչպես ժողովրդական, այնպես էլ աշուղական և հեղինակային գործեր: Չնայած դրանց որոշակի հղկվածությանը, այդ երգերում հնամենի առասպելներն ի հայտ են գալիս իրենց համակ արխաիզմով և կրոնաաշխարհայացքային պատկերացումների միանգամայն լավ պահպանված տարրերով, իսկ որոշ դեպքերում դրանք այս կամ այն սյուժեի միակ դրսևորումներն են:

Խստորեն ասված, առասպելական պատկերացումների դրսևորումներ կարող են համարվել բանահյուսական բոլոր ժանրերը, նաև որոշ ազգագրական նյութեր՝ ինչպես հացի, երկրագործության և անասնապահության, նաև հիվանդության և բժշկության մասին, հավատալիքներին, երագներին կամ տեսիլքներին վերաբերող նյութերը: Դրանք ևս երբեմն հանդես են գալիս չափածո ձևով, այդ թվում՝ միջնադարյան գրավոր ժառանգության մեջ:

Անաս Սրեփանյան

(ԵՉՏԹ)

Չայ և ֆրանսիական տաղերգությունը 12-13-րդ դարերում

12–13-րդ դարերում, երբ միջնադարյան Հայաստանում ծաղկում էր ապրում ոչ միայն տնտեսությունը, այլև մշակույթը, գրականությունը ևս անմասն չէր նոր ու դրական փոփոխություններից: Վերածննդի շունչը զգալի էր նաև միջնադարյան քնարերգության մեջ: Տաղերգությունը ֆրանսիական գրականության մեջ արտահայտում էր հիմնական այն բովանդակությունը, որն առկա էր նաև նույն շրջանի հայ տաղերգության մեջ: Մեր նպատակն է՝ ցույց տալ հայ և ֆրանսիական տաղերգության ընդհանրությունները (որոնք իսկապես կան) և տարբերությունները:

Ընդհանրություններ կան հատկապես սիրո, խոհափիլիսոփայական տաղերում: Տարբերություններն էական են արտահայտման կերպի մեջ: Հայ միջնադարյան տաղերում հերոսուհին նույնքան համարձակ չէ զգացմունքներն արտահայտելիս, որքան Ժան Մառոյի, Քրիստին դե Պիգայի, Էստաշ Դելանի տաղերի հերոսուհին, բայց սերը նույն բնութագրումներն ունի երկու երկրների գրականության մեջ. սերը համարվում է թշնամի,

թունավոր, աստվածային պարզև նն: Օղեֆրուա լե Բաղարդի քանաստեղծության մեջ գեղեցկուհին գովերգվում է նույն մակդիրներով, ինչ որ մեր՝ գրեթե բոլոր տաղերգուների գործերում:

Սոցիալական թեման արծարծող տաղերում զուգահեռներ կան Անրի Բողի, Ժակ դե Միգուննի, Ժեան Էրարտի և Ֆրիկի ստեղծագործություններում, ընդ որում ընդհանրությունները զգալի են և՛ թեմայի, և՛ արտահայտման կերպի մեջ: Ահեղ դատաստանի օրվան պատրաստ ու արթուն լինելու կոչը հարազատ է ամբողջ Միջնադարի համար, բայց հատկապես այդ շրջանում առանձնացան Ֆրանսուա Վիյոնի տաղերը՝ թեման գեղարվեստորեն ներկայացնելու առումով: Իսկ Օլվեանցու տաղերի հեղինակային անհատական մոտեցումները՝ այն ուշագրավ երևույթներն են, որոնցով Վերածնունդը հաստատեց իր գոյությունը կանոնիկ Միջնադարում:

Նույն երևույթն առկա էր և հայկական միջնադարյան քնարերգության մեջ: Միջնադարը հայտնի է նաև նշանների, սիմվոլների առատությամբ, և երկու երկրների տաղերգության մեջ նշանների էական ընդհանրություններ կան: Երկու երկրների քնարերգության մեջ առկա են Վերածննդի հումանիզմի դրսևորումները և կանոնիկ աստվածաբանական-եկեղեցական ընկալումները:

Հիմնական ընդհանրական թեմաններն են՝

1. Ահեղ դատաստան,
2. անպատասխան սիրուց տանջվող հերոս, անհաս հերոսուհի,
3. սոցիալական անհավասարության դեմ բողոք,
4. մեծ հավերժի ձևերի՝ կյանքի ու մահվան անցողիկություն և հավերժություն:

Գոհար Սյուխանյան

(ՀԱԻ, ք.գ.թ.)

«Տոնական» առածանի. հայ ավանդական տոները առածային լեզվում

Արամ Ղանալանյանի «Առածանի»-ում որոշակի թիվ են կազմում հայ ավանդական տոները հիշատակող առածները: Մեր նպատակը՝ տոների առածային լեզվի քննությունն է. ինչպես են դրանք մուտք գործում առածների մեջ, ինչպիսի՛ այլաբանական կամ ուղղակի իմաստով են դառնում առածների մաս, տոնի՝ առհասարակ, և առանձին տոների՝ մաս-

նավորաբար, ո՛ր բնորոշ գիծը/գծերն են դառնում որոշիչ առածային լեզվում:

Տոնական անդրադարձներ ունեցող առածների զգալի մասը ուշագրավորեն կապվում է ժամանակի գաղափարի հետ: Որոշ առածների պարագայում՝ խոսքն ուղղակի ժամանակի մասին է՝ ամեն ինչի՝ իր ժամանակն ունենալու իմաստային համատեքստում, իսկ մյուսների դեպքում՝ ժամանակի սեզոնային-կլիմայական փոփոխությունների: Առածների այս խմբի համար հիմք է դարձել էկոլոգիական այն գիտելիքը, որն ամբարված է տոնական ավանդույթում:

Առածների մյուս շարքը ներկայացնում է տոների հետ կապված առաջնային զուգորդումները՝ տոների այս կամ այն բնութագրիչները, որոնք, որպես կանոն, ավելի շատ դրանց արտաքին, աշխարհիկ, քան խորքային առասպելաբանական կողմին են առնչվում: Այս առումով, ուշագրավ կարող է լինել տոների առածային և հանելուկային լեզուների համեմատությունը:

Նվարդ Վարդանյան

(ՀԱԻ / ԵՊՀ, ք.գ.թ.)

Այգու իմաստաբանությունը հարսանեկան երգերի համապատկերում

Այգին՝ իր ծառով ու ծաղկով, երգող թռչնով և այգեպանով, քնարական բանահյուսության ամենատարածված խորհրդանիշներից է, որի միջոցով պատկերավորվում են մարդու կենսական գրեթե բոլոր իրադարձությունները՝ ծնունդն ու հասունացումը, սերն ու ամուսնությունը, մահն ու հեռացումն աշխարհից: Մարդու և բուսականության նույնականության, բույսի՝ որպես մարդկային ֆիզիկական և հոգևոր աշխարհի պատկերավորման հնագույն առասպելաբանաստեղծական միջոցի վկայությունները երգի ամենավաղ տեսակում՝ ծիսերգային բնագրերում ենք գտնում: Բուսական աշխարհը խտացվում է այգու խորհրդանիշ-պատկերի մեջ, և այգին ընկալվում է որպես պայմանական մի տարածք, աշխարհի *միկրոմոդել*, ուր մարդը ապրում է, արարում ու մահանում:

Հարսանիքին նախորդող ծեսերին և հարսանիքի տարբեր արարողություններին զուգահեռ կատարվող սիրերգ-հարսներգերում հանդիպում են այգու հետ կապված մի շարք կայուն մոտիվներ, որոնք որոշակի այլաբանական իմաստ ունեն: Այգու հրավերի, այգի մտնելու, այգու ծաղիկը քաղելու, հասուն բարը ճաշակելու, այգու ծառի տակ պառկելու և

քննելու և այլ մոտիվներն արտացոլող երգային տողերը հաճախ կայուն բանաձևի արժեք են ձեռք բերում՝ կրելով խիստ որոշակի իմաստային լիցք և տարբերակային զանազան դրսևորումներով հանդես գալով սիրերգերում՝ որպես սիրո որոշակի հոգեվիճակների այլաբանական արտահայտություններ:

Ներկա զեկուցման մեջ կդիտարկենք այգու հետ կապված կայուն մոտիվները հարսանեկան, մասամբ նաև՝ սիրային երգերում, կփորձենք բացահայտել այգու իմաստաբանությունը հարսանեկան ծիսական բնագրերի համապատկերում:

Սվետլանա Վարդանյան

(ՀԱԻ, բ.գ.թ.)

Արցախում գրառված ծիսական երգերի նմուշներ

«Ավետիս»-ները կամ «Ալելույա»-ները ժողովրդական ծիսերգեր են, որոնք կատարվել են Ծննդյան ճրագալույցի երեկոյան՝ ավետելով Քրիստոսի ծնունդը: Զեկուցման մեջ մեր գրառած բանահյուսական նմուշը քննության ենք առել Խաչիկ վարդապետ Դադյանի բանահյուսական ժողովածուում հրատարակված չորս նմուշների հետ բաղդատմամբ: Դրանց շարքում՝ տարբեր տարիներին գրառված «ավետիս» ծիսերգեր են՝ Արցախի Հաղորթի կամ Դիզակի շրջանից (գյուղ Տումի և շրջակայք), Վարանդա գավառի Ավետարանաց և Ճարտար գյուղերի շրջակայքից, Խաչեն գավառի Առաջաձոր գյուղի շրջակայքից ևն: Այս տարբերակներում մեկտեղված են հեթանոսական ու քրիստոնեական ծիսահավատալիքային մտածողության տարրերն իրենց տարաբնույթ դրսևորումներով, որոնք էլ փորձել ենք բացահայտել մեր զեկուցման մեջ:

Միրանուշ Փարսադանյան

(ԳԻ)

Յովհաննես Միրզայան Վանանդեցի և Սիմեոն Ապարանեցի

Զեկուցման մեջ քննության է ենթարկվում հայկական կլասիցիզմի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Միրզայան Վանանդեցու (1772–1841թթ.) «Արվիիական Հայաստանի» պոեմը՝ այն համեմատության մեջ դիտելով 5-րդ դարի հայ պատմագրության և 16-17-րդ դդ. հեղինակ Սիմեոն Ապարանեցու «Շարագրութիւն հումերական վիպասա-

նութեամբ սակա Պահլաունեացն զարմի և Մամիկոնեացն սեռի» ստեղծագործության համապատասխան հատվածների հետ:

Զեկուցման մեջ փորձ է արվել քննվող երկու պոեմների միջև նմանություններ ու անչություններ գտնելու: Թե՛ Հովհ. Վանանդեցու և թե՛ Միմեոն Ապարանեցու ստեղծագործությունները հայ հերոսական անցյալի փառավոր էջերի ու պատմական դրվագների չափածո վերաշարադրանքն են, որոնցով հեղինակները նպատակ են ունեցել հայրենասիրություն արթնացնելու ժամանակակիցների ինքնագիտակցության մեջ:

Զեկուցման մեջ նաև այն միտքն է ընդգծվում, որ եթե 5-րդ դարի հայ պատմիչների համար առաջնայինը պատմական իրադարձությունները ներկայացնելն ու հերոսներին դրվատելն էր, ապա հետագա դարաշրջանների հեղինակների համար արդեն կարևորվում է հոգեբանական *դրաման*, հերոսական և ուժեղ անհատների կերպարների ստեղծումը և այդ ամենը գեղարվեստական հուզականությամբ ներկայացնելը:

Միեր Քոմունսց

(ԳորՊՀ, ք.գ.թ.),

Լուսինե Ներսիսյան

(ԳորՊՀ, ք.գ.թ.)

**Մի քանի անունների ստուգաբանություն՝
պատմա-ազգագրական տեղեկությունների հենքով
(պատմական Սյունիք)**

Սունդու, Տ'յւք, Քրվանք տեղանուններին վերաբերող ստուգաբանական տեսակետներ առանձնապես չեն հանդիպում: Պատմա-ազգագրական տեղեկությունների հիմա վրա հնարավոր է դառնում նշված տեղանունների ծագման հետ կապված հարցերի լուսաբանումը:

Սունդու բառը, հավանաբար, ծագում է հ.-ե. **sent-* «ուղղվել, գնալ, ընթացք, ուղի, ճանապարհ» արմատից՝ *սունդուկուկու, Մինդարս*:

Տ'յւք գյուղի անունը ծագում է հնդիրանական *dag-* բառից, որ նշանակում է «վառել, այրել», քանի որ տարածաշրջանում միայն այս գյուղն է հայտնի կայծքարի հանքով:

Ստեփանոս Օրբելյանի հիշատակած *Քրոնից վանք* գյուղանվան հիմքում էլ ընկած է *կիր* արմատը և *-նւ /-օն* (-ն+ք) ածանցը:

ԱՐԱՄ ԴԱՆԱԼԱՆՅԱՆ – 110

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԾՐԱԳԻՐ
և
ՁԵԿՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

Ձևավորումը և էջադրումը՝
Արթուր Հարությունյանի